հանեն յարօտ, ով ուր պիտի արածէ, ինչ պէտք է ընել երբ երկու հոգի կամ երկու տոհմ իրարմէ պահանջ մ'ունենան։ Ոչ գրաւոր և ոչ հաստատուն օրէնք մը կայ, այլ տանուտեարք կը ժողովին և ինչ որ պատշաճ գտնին՝ կը վճռեն. այսպէս էին հին ըունաց տոհմապետ ծերունիք ալ (դիւրօրինակ)։ Ա.քրլեսի վահանին վրայ տեսնուած ծերոց նման՝ ասոնք ալ քարերու վրայ բոլորած նստած դատաստան կ'ընեն...։

Շատ պարզունակ է Ալպանեցւոյն կեանքն ալ։ Երկրագործութիւն և շատ աչխատանք չի սիրեր. դիւցազն ըուն նաց նման հովիւ է։ Երբ եղանակն արգիլը բլլայ հովութեան՝ փայտ կը վառէ, ածուղ կը չինէ և կը ծախէ. անշուշտ պատմութեան յիշած ամենէն հին ճարտարութիւնն այս է։ Ալպանիացւոց հիւղերն խեղճ ու կրակ են, բայց չատին մէջ պատուական վարպետաչէն քաներ կը գտնուին, զէնք, քանդակեալ գարգմանակք, քայռամատնեակք, և այլն։ Ոչ ոք գիտէ թէ ինչպէս անոնց ձեռքը անցեր են այսպիսի զարմանալիք։ Իրենց ամենէն ազնուական և գըլխաւորքն ալ, Բիւխքը, ամենէն հասարակ գործոց մասնակից են. երբ որդին իրենց արջառները յարօտ կը տանի՝ Մենելաւոսի նման, հայրն ալ Ոդիսեայ պէս իրենց տնիկը կը չինէ. և երբ գթեզ կնկարկի կը հրամցընէ՝ ինքնին կը մորթէ ոչխարը, ինչպէս կ'ընէր Ա.քիլլես. զեռնի վրայ կը նըստին սեղանի, ամենէն հասարակ գործիքներով. ձեռքէ ձեռք կ'անցընեն բաժակ մը՝ զոր իրենցմէ աւելի կիրթ Թշնամւոց ձեռքէ իյած են. կանայք կը ծառայեն սեղանի վրայ։ Կերակրէն եաև Բիւքքն կ'առնու կը զարնէ կուգա նուագարանը, երիտասարդք գօտեմարտութեամբ կամ ընթացքով կը մրցին. կամ չոյղ պարը կը ձևացնեն էրիկ մարդիկ, որ է ձեռք ձեռքի տալով կրետէի բաւղին մէջ՝ ի սանդ երթալու գնացքն։ Ա.յսպէս ամեն բան հոմերական նկարագրութիւնները կը յիշեցնէ։

Մենք ալ կրնամք աւելցընել թէ անշուշտ այնպէս է հեղինակին միտքն արդէն լցեալ բլլալով այն գեղեցիկ նկարագրութեամբք և հին գաղափարօք։

ՆՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԾՈՎ

Սահրայի վրայ եղած քննութիւնք, օր ըստ օրէ միչտ աւելի կը ստուգեն որ այդ անծայր ու անսահման անապատը ծածկուած բլլայ երբեմն՝ի ջուրց Միջերկրական ծովու, ՝ի միյ կողմանէ տարածուելով յՀայաստան Ովկիանոս, և՝ի միւսմէն ցկարմիր ծով. և հետեւաբար Ափրիկէի հիւսիսային ծայրէն Մարոքի, Ալճերիոյ ու Թունուզի վիճակներն մեծ ու ընդարձակ կղզի մ'եղած պիտի բլլան, միանալով աչքարհագրական եւրոպիոյ հետ։ Գաղղիա անգամ մը այս բանն ստուգելէն ետքը, միտքը ընկաւ վերանորոգել այդ ծովը, ՝ի դիւրութիւն իր գաղթականացը և ամբողջ վաճառականութեան. և սահմանեց մէկէն դրամն ալ. այնպիսի ժամանակ, որ մանաւանդ ինքը դրամոյ պէտք ունի. և եթէ կրկինն իսկ պահանջուի, պատրաստ է վճարելու, մնածելով ապագայ ամենամեծ օգուտը։ Գործոյն առաջին չարժիչը Գ. ֆերդինանտոս Լբսէբս կոճն է, արդէն համբաւեալ Սիւէզեան ջրանցիւ։

Ընդարկումիւնն է հատանել ծովափնեայ բլլոյ փոքրիկ չղմայն, որ կը տարածուի ամիսիմէատրոնի ձևով Գապէսի ծովածոցին չորս կողմը, ՝ի հարաւակողմն Թունուզի, և լայնացք մը բանալ 15 կամ 16 քիլոմեդր երկայնութեամբ։ Այս բլլոյ չղմայն հատանելէն ետքը, ընդ առաջ պիտի ելլայ այնպիսի երկիր մը, որուն մակերևոյթը 20–40 մեդր ցած է Միջերկականին մակերևոյթէն, ուսկից պիտի գայ ջուրը ծածկելու այդ երկիրը, որուն լայնութիւնը 8–10 քիլոմեդր կը հաշուի, 120 քիլոմեդր երկայնութեամբ։ Բայց կը համարինք որ այս ձևանալի ներքին լճին կամ ծովակին չբլլակայ կողմանէն աւելի ընդարձակելի բլլան, վասն զի դեռ բաւական քննութիւնք եղած չեն որոշելու լճակին բացարձակ մակերևոյթը։

digitised by A.R.A.R.@

Եւ եթէ ծովուն ջուրը մնայելով այս երկրին մէջ, կարենայ տարածուիլ ինքն իրեն անդր քան զսահմանն, ահա երկրորդ չրանգք մ'ալ կը ձևանայ՝ որ կը տանի ջուրը 'ի մերձակայ կողմանս. և ծովամփնեայ այս ընդարձակ կողմանքն կը բազմամարդանան գիղերով ու քաղաքներով, և կ'ըլլան համբարանոցք Ափրիկոյ անապատաբնակ աշխարհաց ու ժողովրդոց։ Այսիտ, էլ-քանդարա, Խամայելիա և Սիւէզ որ կը յառաջադիմին մեծաքայլու գոգցես յանկարծակի գալս ելան, կրնան ճշմարտել մեր ըսածը, և գաղափար ու օրինակ ըլլալ այն յառաջադիմութեան որ պիտի տեսնուի, թերևս մեր օրերը, 'ի վերայ ափանց նորոյ ծովուն 'ի ներքսակողմն հիւսիսային Ափրիկոյ։ Եւ յիրաւի աշխարհիս այս կողման յետամնացութեան պատճառը ծովագոդից պակասութիւնն է, ինչպէս նաև Սահրա անապատին մերձաւորութիւնը, որ կ'անվատէ իւրարմէ մեծածաւալ խտրոցաւ քան բաւականի ծաղկեալ զանազան աշխարհները, և կը դժուարացնէ յարաբերութիւնները. ուստի թէ որ կատարուելու ըլլայ առաջարկութիւնը, դիւրամատոյց պիտի ըլլայ Ափրիկէ եւրոպացւոց։

Բայց այս նիւթական յարաբերութեանց օգուտէն զատ, կայ ուրիշ մեծագոյն օգուտ մ'ալ. այսինքն ծովու պիտի փոխէ երկրին կլիմայն, անձրևներն պիտի յաճախեն, ու արգասաբեր պիտի ընեն այն երկիրները՝ որոց անպտղութեան պատճառը ցամաքութիւնն է։

Բայց գործոյն յաջողութիւնը ուրիշ ազգերէն աւելի շահաւոր պիտի ըլլայ Գաղղիոյ. վասն զի Գաղղիա Ափրիկէի հիւսիսակողմը գրեթէ 400,000 քիլոմեդր քառակուսի երկիր ունի, 700 քիլոմեդր ծովափամբ. և ահա ներքին ծովակը պիտի ապահովէ իր այս կալուածները, և մեծ բարոյական ու նիւթական օգ տանալ պիտի տայ։ Ուստի բնականաբար ուրիշ ազգաց չհրը նուազ պիտի ըլլայ յայսմ մասին քան զԳաղղիացւոցը, թէպէտ և ծովագոգն բաց պիտի ըլլայ ամենայն ազգաց։

Թէպէտ և գործոյն օգուտները մեծ են, բայց և ոչ յաղողութիւնը դժուար ըրին. ինչու որ ճամբան անգամ մը բացուելէն ետքը, ջուրը ինքն իրեն կը վազէ. և անգամ մը ծովամփնեայ ըլլոց չղթայից արգելքը վերցնելով, կ'ընթանայ նոր լճակին մէջ այն կերպով, ինչ կերպով որ ընթացաւ ու լեցուց Սիւէզեան չրանցից հարաւակողմեան լերկ լճակները. առ որ բաւական եղաւ չրոյ ծանրութեան ու տեղատուութեան ետծին ամենայ քնական ազդեցութիւնը, որ սկսաւ 'ի 19 մարտի, և տևեց մինչև 17 նոյեմբեր ամոյ յամին 1869։ Միայն առաջիկայ պարագայիս մէջ աւելի քանակ չրոյ պէտք պիտի ըլլայ. և փոխանակ 7 ամոց՝ 15 կամ 18 ամիսք. բայց այս ամեն բաներն ինքն իրեն կը կատարուին, միայն թէ չրանգքն այնպէս ամրաչէն ըլլայ, որ տեղիք չտայ չրոց ճնշմանը, որուն առջև կ'առնուի՝ փակելով չրոյն սահանքը կամ բերանը աւազալից պատկերով։

Գեղեցիկ են այս ակնկալութիւնքն ու հրապուրիչ. և առաջարկութեան կատարումը այնչափ աւելի դիւրին, որչափ որ ծախքն համեմատութեամբ ոչինչ է։ Բայց ամեն բանէ առաջ պէտք է չափել նախ խնամքով երկրին երեսը, և ապա որոշել ապագայ ներքին ծովուն չատակը ու ափունքը, զոր կըրնան մէկ քանի երկրաչափք քիչ առեղուն մէկ կատարել. Սակայն այս բաներն ընելու համար ալ, հարկ է նախ յարմարցընել ձեռնարկութեան պայմանները տեղական կառավարութեան հետ, վասն զի առանց հաճութեան ու թոյլտուվթեան Թունուզի Պէյլիք՝ գործը չկրնար կատարուիլ. և զՊէյն առ այս համոզելու համար բաւական է ցուցընել միայն իր ժողովրդեան ու տեղութեան ապագայ երջանկութիւնը ու յառաջադիմութիւնը։ Եւ արդէն թէպէ թէ յարմարած ըլլան պայմանքն Պէյլին ու Բ. Դրան հետ. վասն զի Գաղղիա պատուէր ղրկեց Ճարտարապետաց Թունուզի՝ չափել Գապէսի ծովածոցը։

digitised by A.R.A.R.@